

**ՀԱՄԱՅՆԱԳԻՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԵՎ ՂՐՂԶՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**  
**ԵԿԱՄՏԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ**  
**ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ղրղզստանի Հանրապետության Կառավարությունը,

ցանկանալով կնքել եկամտի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելու կանխելու մասին համաձայնագիր, հաստատելով իրենց նպատակները զարգացնելու և ամրապնդելու տնտեսական, գիտական, տեխնիկական և մշակութային համագործակցությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

**ՀՈԴՎԱԾ 1**  
**ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

2. Սույն Համաձայնագրի նպատակով մի Պայմանավորվող պետության կազմակերպության, ընկերակցության կամ այլ անձի եկամուտները, որոնք, Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի հարկային օրենսդրության համաձայն, ամբողջությամբ կամ մասամբ համարվում են հարկման առումով թափանցիկ, պետք է համարվեն այդ Պետության ռեզիդենտի եկամուտ, սակայն միայն այն չափով, որքանով եկամուտը տվյալ Պետությունում հարկվելու նպատակով համարվում է այդ Պետության ռեզիդենտի եկամուտ:

**ՀՈԴՎԱԾ 2**  
**ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ**

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է եկամուտներից այն հարկերի նկատմամբ, որոնք գանձվում են Պայմանավորվող պետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ Պայմանավորվող պետությունների գործող օրենսդրության համապատասխան, անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտից հարկեր են համարվում եկամտի ընդհանուր գումարից կամ եկամտի առանձին տարրերից գանձվող բոլոր հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներից հարկերը, ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձի ընդհանուր գումարից գանձվող հարկերը, ինչպես նաև գույքի արժեքի աճից գանձվող հարկերը:

3. Գոյություն ունեցող հարկեր, որոնց վրա տարածվում է սույն Համաձայնագիրը, համարվում են.

ա) Ղրղատանի Հանրապետությունում՝

- իրավաբանական անձանց եկամուտներից և շահույթից գանձվող հարկ.
- ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկ:

բ) Հայաստանի Հանրապետությունում՝

- շահութահարկ.
- եկամտային հարկ:

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև ցանկացած՝ նոյնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվից հետո՝ ի լրում գործող հարկերի կամ դրանց փոխարեն։ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կծանուցեն միմյանց իրենց հարկային օրենսդրությունում կատարված ցանկացած էական փոփոխության մասին։

## ՀՈՂՎԱԾ 3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» եզրույթները, ենթատեքստից կախված, նշանակում են՝ Հայաստան կամ Ղրղատան.

բ) «Ղրղատան» եզրույթը նշանակում է Ղրղատանի Հանրապետություն։ Աշխարհագրական իմաստով գործածելու դեպքում «Ղրղատան» եզրույթը նշանակում է՝ տարածք, որի նկատմամբ Ղրղատանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքներն ու իրավասությունը՝ միջազգային իրավունքի համաձայն, և որի նկատմամբ գործում է Ղրղատանի Հանրապետության հարկային օրենսդրությունը։

գ) «Հայաստան» եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետություն, և երբ գործածվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան

իրավունքներն ու իրավասությունը՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերի.

դ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» եզրույթները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

ե) «անձ» եզրույթը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում.

զ) «ձեռնարկություն» եզրույթը նշանակում է՝ ցանկացած ձեռնարկատիրական միավորում կամ ցանկացած այլ միավորում, որը հարկման նպատակով համարվում է ձեռնարկատիրական միավորում.

Է) «միջազգային փոխադրում» եզրույթը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը, օդանավը, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետության վայրերի միջև.

ը) «իրավասու մարմին» եզրույթը նշանակում է.

- Հայաստանում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչը.

- Ղրղզստանում՝ Ղրղզստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն, Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայություն կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչներ.

թ) «ազգային անձ» եզրույթը նշանակում է.

- Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ.

- Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա իր՝ որպես այդպիսին, կարգավիճակն ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա.

ժ) «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ ձեռնարկատիրական գործունեության իրականացում.

ժա) «մասնագիտական ծառայություններ» եզրույթը, մասնավորապես, ներառում է անկախ գիտական, գրականագիտական, գեղարվեստական,

կրթական կամ ուսուցողական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ինժեներների, ճարտարապետների, ատամնաբույժների, հաշվապահների, առողջապետության անկախ գործունեությունը.

ԺԲ) «փաստացի ղեկավարման վայր» եզրույթը նշանակում է՝ վայր, որտեղ իրականացվում է կազմակերպության փաստացի ղեկավարումն ու վերահսկումը, և (կամ) որտեղ ընդունվում են կարևոր հարցերի շուրջ բարձր մակարդակով որոշումներ, որոնք առանցքային են կազմակերպության ղեկավարման համար:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագրի ցանկացած պահի կիրառման ժամանակ դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստից այլ բան չի բխում, կունենա այն նույն նշանակությունը, որն այդ պահին ունի տվյալ Պետության օրենսդրությամբ՝ այն հարկատեսակների առնչությամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը, ընդ որում՝ այդ Պետությունում գործող հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ Պայմանավորվող պետության այլ օրենքներով այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 4 ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» եզրույթը նշանակում է՝ անձ, որը այդ Պետության օրենսդրության համաձայն՝ ենթակա է հարկման այնտեղ իր բնակության, մշտական կացության, փաստացի կառավարման, ստեղծման և գրանցման վայրի կամ ցանկացած այլ համանման չափանիշի հիման վրա, ինչպես նաև ներառում է այդ Պետությունը կամ տեղական կառավարման մարմինները։ Սակայն այդ եզրույթը չի ներառում որևէ անձի, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի առնչությամբ։

2. Այն դեպքում, եթե սույն հոդվածի 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ։

ա) նա համարվում է այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան։ Եթե նա երկու Պայմանավորվող պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են։

բ) Եթե հնարավոր չէ որոշել այն Պայմանավորվող պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պայմանավորվող պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող կողմի պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է.

գ) Եթե նա երկու Պայմանավորվող կողմերի պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա չի բնակվում դրանցից և ոչ մեկում, ապա համարվում է այն Պայմանավորվող կողմի պետության ռեզիդենտը, որի քաղաքացին հանդիսանում է.

դ) Եթե նա հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների քաղաքացի կամ դրանցից և ոչ մեկի քաղաքացի չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, եթե ըստ սույն հոդվածի 1-ին կետի դրույթների ֆիզիկական անձից տարբերվող անձը ճանաչվում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է վերջինիս փաստացի ղեկավարման վայրը:

## ՀՈԴՎԱԾ 5

### ՄՇՏԱԿԱՆ ՀԱՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «մշտական հաստատություն» եղրույթը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» եղրույթը ներառում է, մասնավորապես.

ա) կառավարման վայրը.

բ) մասնաճյուղը.

գ) գրասենյակը.

դ) գործարանը.

ե) արհեստանոցը.

զ) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների հետախուզման, վերամշակման կամ արդյունահանման ցանկացած այլ վայրը, և

է) գյուղատնտեսական կամ անտառային տարածքները:

3. «Մշտական հաստատություն» եղրույթը ներառում է նաև.

ա) շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման օբյեկտը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը, բայց միայն այն դեպքում, եթե այդպիսի հրապարակը, օբյեկտը գործում է կամ գործունեությունը տևում է ավելի քան 6 ամիս, և

բ) ձեռնարկության կողմից ծառայությունների մատուցումը՝ ներառյալ խորհրդատվական ծառայությունները, այդ նպատակով նրա կողմից ընդգրկված վարձու աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով, բայց միայն այն դեպքում, եթե այդ բնույթի գործունեությունը Պայմանավորվող պետության տարածքում (միևնույն կամ այդ ծրագրի հետ կապված այլ ծրագրի համար) ցանկացած տասներկուամսյա ժամկետում շարունակվում է ընդհանուր առմամբ 6 ամիսը գերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» եզրույթը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով.

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով.

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով.

դ) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով.

ե) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով:

5. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ այն դեպքում, եթե անձը չի հանդիսանում անկախ կարգավիճակով գործակալ, (որին վերաբերում է սույն հոդվածի 6-րդ կետը), գործում է Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող առաջինը նշված Պայմանավորվող պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության մասով, բացառությամբ, եթե այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է սույն հոդվածի 4-րդ կետով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի

միջոցով, այդ կետի դրույթների համաձայն՝ այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության:

6. Չնայած սույն հոդվածի վերը նշված կետերին՝ համարվում է, որ Պայմանավորվող պետության ապահովագրական ծեռնարկությունը, բացառությամբ վերաապահովագրության դեպքերի, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, եթե ապահովագրական վճարները հավաքում է այդ Պայմանավորվող պետությունում կամ ոիսկերի ապահովագրությունն իրականացնում է անկախ գործակալ չհանդիսացող անձի միջոցով, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածի 7-րդ կետը:

7. Ծեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ ծեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ պետությունում բրոքերի, առևտրային գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ ծեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պայմանավորվող պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

## ՀՈԴՎԱԾ 6

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» եզրույթն ունի այն նշանակությունը, որն ունի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է տվյալ գույքը:

Սույն հոդվածի համաձայն՝ հարկման ենթակա անշարժ գույքից ստացվող եկամուտը ցանկացած դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալությամբ տալուց և ցանկացած այլ տիպի օգտագործումից, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասուններից ու սարքավորումներից, իրավունքներից, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր

օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքից (ուզուֆրուկտ) և օգտակար հանաձոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքներից ստացվող եկամուտները: Նավերը, օդանավերը, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցները չեն դիտարկվում որպես անշարժ գույք:

3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների և անկախ բնույթի անձնական ծառայությունների մատուցման համար օգտագործվող անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 7

### ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇԱՀՈՒՅԹ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը մյուս Պայմանավորվող պետությունում չի իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող կողմերի պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող՝ միանգամայն ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնել մշտական հաստատության գործունեության նպատակներով կատարված

ծախսերը, այդ թվում՝ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից՝ կատարված են դրանք այն պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե դրա սահմաններից դուրս: Սակայն այդպիսի նվազեցում չի թույլատրվում այն գումարների նկատմամբ (փաստացի կատարված ծախսերի փոխհատուցումից տարբերվող), որոնք մշտական հաստատության կողմից վճարվել են ձեռնարկության գլխամասին կամ ցանկացած այլ մասնաճյուղին որպես ռոյալթի, պարզեցնելու կամ այլ նմանատիպ վճարումներ արտոնագրերի կամ այլ իրավունքների օգտագործման համար, կամ որպես միջնորդավճար մատուցած ծառայությունների կամ կառավարման համար, կամ, բացառությամբ բանկերի, մշտական հաստատությանը տրամադրած փոխառության համար տոկոսների միջոցով:

4. Եթե մշտական հաստատությանը վերագրելի շահույթի ձեռնարկության ընդհանուր շահույթը ըստ առանձնացված ստորաբաժանումների համամասնորեն բաշխելու սկզբունքով որոշումը Պայմանավորվող պետությունում ունի ընդունված կիրառություն, ապա սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույթները չեն կարող արգելել Պայմանավորվող պետությանը հարկվող շահույթը որոշել այդպիսի բաշխման միջոցով, ինչը սովորաբար կիրավում է: Բաշխման ընտրված մեթոդը պետք է հանգեցնի սույն հոդվածով նախատեսված սկզբունքներին համապատասխան արդյունքների:

5. Եթե Պայմանավորվող պետություններից որևէ մեկի իրավասու մարմնի ունեցած տեղեկությունը կամ այն տեղեկությունը, որը հեշտությամբ կարող է նրա կողմից ձեռք բերվել սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն, բավարար չէ մշտական հաստատությանը վերագրելի շահույթը որոշելու համար, ապա այդ դեպքում շահույթը կարող է հաշվարկել այդ Պետության հարկային օրենսդրության համաձայն:

6. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

7. Սույն հոդվածի նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է ամեն տարի նույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ:

8. Այն դեպքում, եթե շահույթը ներառում է այնպիսի եկամուտ կամ եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին դիտարկվում են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

## ՀՈՂՎԱԾ 8

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՇԽՈՒՄՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. Սույն հողվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև նավերի, օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմամբ զբաղվող միավորումից, համատեղ ձեռնարկությունից կամ միջազգային կազմակերպություններից ստացած շահույթի նկատմամբ:

## ՀՈՂՎԱԾ 9

### ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 1. Այն դեպքում, եթե՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության, ինչպես նաև մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում.

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող են լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, եթե Պայմանավորվող պետությունը այդ Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում հարկվում է, և այդ ձևով ներառված շահույթը համարվում է շահույթ, որը հաշվեգրված կլիներ առաջինը նշված Պայմանավորվող պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև ստեղծված պայմանները

լինեին նույնը, ինչպիսին կինեին անկախ ծեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պայմանավորվող պետությունը կատարում է այդպիսի շահութից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդպիսի ճշգրտման կատարումը գտնում է իմանավոր: Այդպիսի ճշգրտումը որոշելիս պետք է հաշվի առնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

## ՀՈԴՎԱԾ 10 ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենսդրությանը համապատասխան բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը համարվում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն այս սահմանափակումների կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

Սույն կետը չի ազդում ընկերության այն շահութի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ եկամուտ բոլոր բաժնետոմսերից կամ պարտապահանց չհանդիսացող՝ շահութին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից եկամուտը՝ այն Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն, որի ռեզիդենտն է բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով և

մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, ապա այդ մյուս Պայմանավորվող պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ, եթե այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պայմանավորվող կողմից պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

## ՀՈԴՎԱԾ 11 ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են այդ Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության Կառավարությանը կամ Ազգային (կենտրոնական) բանկին վճարվող տոկոսները ազատվում են հարկումից:

4. «Տոկոսներ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ եկամուտ բոլոր տեսակի պարտապահանջներից՝ անկախ գրավով ապահովված

լինելուց կամ չլինելուց և պարտապանի շահովթում մասնակցության իրավունք տալուց, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարզևաբարներն ու մրցանակները:

Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պայմանավորվող պետությունն է կամ նրա տեղական կառավարման մարմինը կամ տվյալ Պայմանավորվող պետության ռեզիդենտը: Սակայն այն դեպքում, եթե տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսները կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, եթե վճարողի և փաստացի շահառու կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կիամաձայնեցվեր վճարողի և փաստացի շահառուի միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրության համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

## ՀՈԴՎԱԾ 12

### ՌՈՅԱԼԹԻՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պայմանավորվող պետության օրենսդրության համապատասխան բայց եթե ռոյալթիների փաստացի սեփականատեր հանդիսացող ստացողը համարվում է մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթիներ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, արվեստի կամ գիտական աշխատանքների՝ ներառյալ ծրագրային ապահովման, կինոնկարների, ցանկացած արտոնագրի, առևտրային նշանի, ձևավորման կամ մոդելի, նախագծի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը՝ Պետությունն է, տեղական կառավարման մարմինը կամ այդ Պետության ռեգիդենտը: Սակայն եթե ռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեգիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտավորությունը, և

այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրության համապատասխան, հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

## ՀՈՂՎԱԾ 13

### ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտները, որոնք ստացվում են մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում սահմանված անշարժ գույքի օտարումից, կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից ստացված եկամուտները, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից ստացված եկամուտները, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցների, կամ այդպիսի նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող՝ շարժական գույքի օտարումից ստացված եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ընկերության բաժնետոմսերի կամ կանոնադրական կապիտալի այլ բաժնետիրական իրավունքների օտարումից ստացած եկամուտը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, եթե այդպիսի ընկերության ակտիվների

առնվազն 50 տոկոսը կազմված են այդ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից:

5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից ստացված եկամուտը ենթակա է հարկման այն Պայմանավորվող պետությունում, որի ռեգիդենտ է հանդիսանում գույքն օտարող անձը:

## ՀՈԴՎԱԾ 14

### ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏ

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, վճարները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված Պետությունում, եթե.

ա) ստացողը ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրությունը չի կատարվում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատության կողմից:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա, օդանավում կամ ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցներում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող պետության ռեգիդենտի ստացած վարձատրությունը կարող է հարկվել այդ Պայմանավորվող պետությունում:

## **ՀՈԴՎԱԾ 15 ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ**

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ ընկերության տնօրենների խորհրդի կամ ցանկացած այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

## **ՀՈԴՎԱԾ 16 ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ**

1. Անկախ սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այն դեպքում, եթե արվեստի գործիչ կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործիչն կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ սույն Համաձայնագրի 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործիչ կամ մարզիկի գործունեությունը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն տարածվում այն եկամուտների վրա, որոնք ստացվում են Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացված գործունեությունից, եթե այդ մյուս Պայմանավորվող պետությունում կացությունն ամբողջությամբ կամ հիմնականում ֆինանսավորվում է մեկ կամ երկու Պայմանավորվող պետությունների պետական հիմնադրամներից կամ տեղական իշխանությունների կողմից կամ Պայմանավորվող պետությունների կառավարությունների միջև մշակութային համաձայնագրի շրջանակներում:

## **ՀՈԴՎԱԾ 17**

### **ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ ԵՎ ԱՆՈՒԻՏԵՏՆԵՐ**

1. Հաշվի առնելով սույն Համաձայնագրի 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկինում կատարած վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները, ինչպես նաև անուիտետները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. «Անուիտետ» եզրույթը նշանակում է՝ սահմանված գումար, որը ենթակա է պարբերաբար վճարման սահմանված ժամկետներում ամբողջ կյանքի ընթացքում կամ որոշակի կամ սահմանված ժամանակահատվածում՝ դրամով կամ դրամական արտահայտությամբ համարժեք և պարտավորությանը համապատասխան ամբողջական փոխհատուցում:

## **ՀՈԴՎԱԾ 18**

### **ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա տեղական կառավարման մարմնի կողմից այդ Պայմանավորվող պետությանը կամ տեղական ինքնակառավարման մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված՝ կենսաթոշակից տարբերվող աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի վարձատրությունը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում, և ֆիզիկական անձը համարվում է այդ Պետության ռեզիդենտ, որը՝

- այդ Պետության քաղաքացի է, կամ
- չի դարձել այդ Պետության ռեզիդենտ միայն ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության կամ նրա տեղական կառավարման մարմնի կողմից կամ նրանց ստեղծած իիմնադրամների կողմից այդ Պետությանը կամ տեղական ինքնակառավարման մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված ցանկացած կենսաթոշակ ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պայմանավորվող պետության ռեգիդենտն ու քաղաքացին:

3. Սույն Համաձայնագրի 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող կողմի պետության կամ նրա տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վճարվող աշխատավարձի և համանման այլ վարձատրությունների, ինչպես նաև կենսաթոշակների նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 19 ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ուսանողը կամ ստաժորը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ, և որը գտնվում է առաջինը նշված Պայմանավորվող պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, չի հարկվում այդ Պայմանավորվող պետությունում իր ապրելու, կրթության կամ մասնագիտանալու համար ստացած վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են այդ Պայմանավորվող կողմի պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

## ՀՈԴՎԱԾ 20 ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չնշված եկամտի տեսակները, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից ստացվող եկամտից տարբերվող այլ եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեգիդենտ, առևտրային գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ ստացվում է եկամուտը, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները՝ կախված հանգամանքներից:

3. Անկախ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չնշված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տեսակները նույնպես կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

## ՀՈԴՎԱԾ 21

### ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

1. Այն դեպքում, եթե մի Պայմանավորվող պետության ռեգիդենտը եկամուտ է ստանում, որը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջինը նշված Պետությունը թույլ է տալիս այդ ռեգիդենտի եկամտից գանձվող հարկից հանել մյուս Պետությունում եկամտից վճարված հարկի գումարին համարժեք գումար:

Այդպիսի նվազեցումները ամեն դեպքում չպետք է գերազանցեն մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված եկամտահարկի այն մասը, որը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում՝ կախված հանգամանքներից:

2. Սույն Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան՝ մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի ստացած եկամուտն այդ Պետությունում ազատված է հարկումից, ապա այդ Պետությունը, այնուամենայնիվ, այդպիսի ռեգիդենտի եկամտից գանձվող հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը:

## ՀՈԴՎԱԾ 22

### ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց նույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պայմանավորվող պետության ազգային անձինք՝ մասնավորապես կապված ռեգիդենտության հետ: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեգիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ռեգիդենտ համարվող՝ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված

պարտավորության կատարման, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորության կատարումն է, որոնց ենթակա են այդ Պայմանավորվող պետությունների ազգային անձինք նույն պայմանների դեպքում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պայմանավորվող պետությունում, քան այդ մյուս Պայմանավորվող պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումն է: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող, որ նա մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով տրամադրել այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրի, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները, տոկոսները, ռոյալթին և Պայմանավորվող պետության ձեռնարկության կատարած այլ վճարումները մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես կնվազեցվեին, եթե դրանք վճարվեին առաջինը նշված Պետության ռեզիդենտին:

## ՀՈԴՎԱԾ 23

### ՓՈԽՀԱՄԱՎԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կիանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ Պայմանավորվող պետությունների ազգային օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին՝ ուսումնասիրության համար, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 22-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է: Դիմումը պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմնը դիմումը կիամարի հիմնավորված, և եթե նա չի կարողանա հանգել գոհացուցիչ որոշման, կծառի հարցը լուծել մյուս

Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառելու սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկումը: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կատարվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության մեջ առկա ցանկացած ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կձգտեն փոխադարձ համաձայնությամբ լուծել բոլոր դժվարություններն ու հակասությունները, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները, կարող են անսմիջական կապ հաստատել իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով միմյանց հետ նախորդ կետերի ըմբռնման մեջ համաձայնության հասնելու նպատակով:

## ՀՈՂՎԱԾ 24

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի դրույթների կամ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության կիրառման համար փոխանակում են հարկերին վերաբերող տեղեկություններ այն չափով, որը չի հակասում սույն Համաձայնագրի դրույթներին: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն հոդվածի 1-ին կետի դրույթի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի, ինչպես այդ պետության ներքին օրենսդրության համապատասխան ստացված տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են սույն հոդվածի 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննմանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդ նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնել իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ.

բ) տրամադրել տեղեկություններ, որոնք հասանելի չեն իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում.

գ) ներկայացնել տեղեկություններ, որոնք կբացահայտեն որևէ արտադրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետությունը տեղեկություններ է պահանջում սույն հոդվածի համաձայն, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկությունների ձեռք բերման իր տրամադրության տակ եղած միջոցները՝ ստանալու համար պահանջված տեղեկությունները նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս Պայմանավորվող պետությունն իր հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ նշված պարտավորությունը սույն հոդվածի 3-րդ կետով ենթարկվում է սահմանափակման, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը թույլտվություն՝ մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում է բանկ, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձ կամ գործակալությունում աշխատող կամ վստահված անձ, կամ՝ որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը թույլտվություն՝ մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում է բանկ, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձ կամ գործակալությունում աշխատող կամ վստահված անձ, կամ՝ որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

## ՀՈԴՎԱԾ 25

### ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունները:

## **ՀՈԴՎԱԾ 26**

### **ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**

Պայմանավորվող պետությունների փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են արձանագրություններով կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կդառնան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 27-րդ հոդվածին համապատասխան:

## **ՀՈԴՎԱԾ 27**

### **ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼԸ**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող պետությունների կողմից սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար ներպետական ընթացակարգերի ավարտի մասին վերջին գրավոր ծանուցման ստացման օրվանից:
2. Սույն Համաձայնագրի դրույթները գործում են՝
  - ա) վճարման աղբյուրից գանձվող հարկերի առնչությամբ, որոնք վճարվել կամ հաշվարկվել են օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվանից.
  - բ) այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող օրացուցային տարվա համար:

## **ՀՈԴՎԱԾ 28**

### **ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա մինչև Պայմանավորվող պետություններից մեկի կողմից դրա գործողության դադարեցումը:
2. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին ծանուցում ներկայացնելով սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի հետո սկսվող ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ:

Այդ դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը՝

ա) վճարման աղբյուրից գանձվող հարկերի առնչությամբ, որոնք վճարվել կամ հաշվարկվել են օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո՝ դադարեցման մասին ծանուցագիրը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից, և

բ) այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային առաջին տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ ՆԵՐՔՈՍՏՈՐԱԳՐՅԱԼՆԵՐԸ, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Զույուն - Դիմ քաղաքում, 2019 թվականի օգոստոսի 9-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, դրդգերեն և ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարագոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և կիրառման ժամանակ առաջացած տարածայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝

*Դ. Բագրայյան*

ՂՐՂԶՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝

*Օ. Ջանիկյան*